ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ԷԱՃԾՁԲ-7/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30-ը հունիսի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Սարգսյաններ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության կոնսորցիումի պայմանագիր Ա/Ձ Հրահատ Օհանյան և «Տավինկո» գինու-կոնյակի գործարան» ՍՊԸ հետ/՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Սաֆարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 20.02.2019թ. կնքված № ԷԱՃԾՁԲ-7/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **2 792 334.3 (երկու միլիոն յոթ հարյուր իննսուներկու հազար երեք հարյուր երեսունչորս ամբողջ երեսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,** որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ Արարատի մարզ, գ. Արարատ, Թումանյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Արարատի մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1150091918300[illegible]
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 04226402
ՀՀ պաշտպանության նախարարության	Տնօրեն
ՆՏԱ գլխավոր վարչության պետ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

Հավելված N 1
№ ԷԱՃԾՁԲ-7/1-1 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	Չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ծառայությունների մատուցումը ըստ կիսամյակի 2020թ.
						1-ին կիսամյակ
1	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Արարատի տարածաշրջան)	կգ	16759	166.617	2 792 334.3	16759

Հավելված N 2
№ ԷԱՃԾՁԲ-7/1-1 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Արարատի տարածաշրջան)	98391170/6	2792334.3	2792334.3	2792334.3

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍԱՐԳՍՅԱՆ ՍՊԸ» ՍՊԿ տնօրեն

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ